«ԿՈՒՄԱՅՐԻ-97» ՍՊԸ-ի թիվ ՍՆԴ/3818/04/24 սնանկության գործով 09.11.2026թ. կազմակերպված կրկնաճուրդ-վաճառքի մասին

2026-10-22 15:29:50

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

2026թ. նոյեմբերի 09-ին ժամը 15:00-ին «ԿՈՒՄԱՅՐԻ-97» ՍՊԸ-ի թիվ ՍՆԴ/3818/04/24 սնանկության գործով կառավարիչ Ս. Հարությունյանի կողմից ք. Գյումրի, Գ. Նժդեհի 26/33 հասցեում կանցկացվի սնանկության վարույթում առկա գույքի բաց դասական եղանակով աճուրդը, ընդհանուր թվով 1 լոտ՝

Լոտ 1- ք. Գյումրի, Աբովյան փողոց, 246/2 ավտոտնակ/ սեփ. վկայական՝ 2019668, տրված՝ 09.08.2006թ., հողամասի մակերեսը՝ 21.42 քմ, շինության մակերեսը՝ 17.98 քմ /մեկնարկային գինը՝ 1.077.420 ՀՀ դրամ:
Անշարժ գույքի՝ երրորդ անձանց իրավունքներով, ինչպես նաև բնակիչներով և գույքով ծանրաբեռնված լինելու դեպքում, դրանց հնարավոր վտարման հարցը կարգավորվում է գնորդի կողմից և գնորդի միջոցներով:
Գույքի վաճառքի, նոտարական վավերացման, գրանցման /այդ թվում հնարավոր վտարման/ հետ կապված բոլոր ծախսերն և գործողությունները կատարվում են գնորդի կողմից:
Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր: Մասնակցության վճարը և նախավճարը կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 տոկոսը/ բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով/ և 5 տոկոսը:
Աճուրդի մասնակից չհամարվող անձը աճուրդին ներկա գտնվելու համար կառավարչին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչը՝ աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ հանձնարարականի բնօրինակը և իր անձը հաստատող փաստաթուղթը: Կառավարիչն իրավասու է

սույն կետում նշված փաստաթղթերը չներկայացրած անձին չթույլատրել ներկա գտնվել աճուրդին։
Աճուրդի նախավճարը, մասնակցության վճարը պետք է վճարվեն կանխիկ կամ փոխանցումով «ԱյԴի ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Գյումրի մասնաճյուղի «ԿՈՒՄԱՅՐԻ-97» ՍՊԸ-ի սնանկության հատուկ հաշվին՝ ՀՀ 11802065849800, աճուրդի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ։
Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օր առաջ կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան։
Աճուրդում հաղթող մասնակից է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը։
Աճուրդում հաղթած անձը աճուրդի վաճառքի գինը վճարում է աճուրդի անցկացման օրվանից 10 օրվա ընթացքում։
Լոտն /լոտերն/ ուսումնասիրել ցանկացողները յուրաքանչյուր հայտարարության 7-րդ օրը ժամը 12:00-14:00 կարող են այցելել գույքի գտնվելու վայր՝ դրա մասին 2 օր առաջ նախապես տեղեկացնելով սնանկության գործով կառավարիչ Ս. Հարությունյանին (հեռ. +37477987061)։
Աճուրդի կանոնակարգին ծանոթանալ ցանկացողները աճուրդին նախորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում ժամը 10:00-18:00 կարող են այցելել ՀՀ սնանկության դատարան /ք. Երևան, Օտյան 53/2 կամ ք. Գյումրի, Անկախության հր.7/, կամ զանգահարել սնանկության գործով կառավարիչ Ս. Հարությունյանին (հեռ. +37477987061)։
Սույն աճուրդը կազմակերպված է և անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի թիվ 116-Ն հրամանով սահմանված կարգին համապատասխան։

37477987061
s.harutyunyan57@mail.ru
ք.Գյումրի, Պ. Սևակ 13շ., 38բն.